ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հրատարակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/28** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2017 թվականի մարտի 20-ին** կնքված **N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/28»** ծածկագրով պայմանագրում **2017 թվականի դեկտեմբերի 1-ին** կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Տպարանային աշխատանքների հետ կապված ֆորս-մաժորային իրավիճակի հետ պայմանավորված, Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել պայմանագրով նախատեսված հրատարակման աշխատանքներիի կատարման՝ գրքի հրատարակման և հանձնման ժամկետը:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի N 1 «Աշխատանքի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի դեկտեմբերի 30-ը:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տաթևիկ Սուքիասյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/28» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «01» 12 2017թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ն, ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Ս. Հովհաննիսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի մարտի 20-ին կնքված պետության կարիքների համար հրատարակման աշխատանքների կատարման պետական գնման **N «ՀՀՄՆ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/28»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում աշխատանքի կատարման ժամկետի ավարտը՝ **«01» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերը փոխարինել **«30» դեկտեմբեր, 2017 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,	հասցեն՝ Երևան – 0009, Տերյան 91, հ. 2
հեռ.՝ 58-51-96, 58-51-78	հեռախոս՝ 52-45-61
ՀՎՀՀ 08030202, h/h 900011012862	ՀՎՀՀ 01501418, Հ/Հ 163038104309
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«Հայէկոնոմբանկ» Մյասնիկյանի մասնաճյուղ
_____ Ս. Մուրադյան	_____ Ս. Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.